ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզ Վեդի համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 154 « 01 » Սեպտեմբեր 2023 թ.

Օբյեկտ Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի /մանկապարտեզ/ նախադպրոցական հաստատության
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

կառուցում
(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

«Աշխատանքային նախագիծ» 4-րդ կատեգորիա, մեկ փուլ նախագծային փաստաթղթերի մշակման համար:
ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ՀՀ Արարատի մարզ, Վեդի համայնք, Գոռավան բնակավայր
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատողներ Վեդու համայնքապետարան
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Վեդի համայնքի ավագանու 13.09.2022թ. N 129-Ա
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը 6 / վեց / ամիս
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Վեդի համայնքի Գոռավան բնակավայրում
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — 0.25 հա
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը — Չկառուցապատված
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — առկա են
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

առկա են

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում` ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

առկա են

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

առկա չեն

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Հաշվի առնել առկա կառուցապատումը, ապահովել մոտակա շինությունների շահագործման պայմանները

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել ՀՀ Արարատի մարզի, Վեդի համայնքի Գոռավան բնակավայրերի /մանկապարտեզ/ նախադպրոցական հաստատության նախագծեր:

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ սահմանված նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

6 մետր

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

12 մետր

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

5.4

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

31.7 %

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

68.3 %

9.7. այլ պահանջներ

Հատակագծային լուծումներ մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի ՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները:
Հարևան հողամասեր նայող ճակատներում բացվածքներ նախատեսել նորմատիվ հեռավորությունների պահպանման դեպքում:
Հարևան հողամասերի սեփականատերերի համաձայնությամբ կառույցը կարող է տեղադրվել հողամասի սահմանագծում:

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Նախատեսված չէ

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Ըստ ՀՀ-ում գործող նորմերի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

Կցվում է Պահանջվում է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է Պահանջվում է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է Պահանջվում է
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներդրված դիտահորը) տեղադիրքը

Կցվում է Պահանջվում է
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

առկա չեն

12.6. աղբահանություն

Նախատեսել

13. տարածքի ինժեներական նախապատրաստում

Իրականացվելու են
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Պահանջվում է

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Տեղական քար, ցեմենտ, ավազ, ամրան, ներկ և այլն

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

ըստ ՀՀ-ում գործող նորմերի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Նախատեսել հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Պահանջվում է

19. Շրջակա միջավայրի պահպանում

ըստ ՀՀ-ում գործող նորմերի

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Մշակել շինարարության կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Վեց ամիս , մեկ փուլով « Աշխատանքային նախագիծ»

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 2-ի

Համալիր փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Վերոու համայնքապետարանի հետ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Հանրային լսումներ
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

Համաձայնեցում Վեդու համայնքապետի հետ մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնեցում ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ / օգտագործող / հետ:

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ,
ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

նախատեսված չէ

27. Այլ պայմաններ

ՀՀՇՆ 21.01.2014թ.-ի «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմեր՝

Գլխավոր հատակագծում նշել հրշեջ մեքենաների մոտեցման ճանապարհները

Տարհանման հիմնական ելքերի, ննջասենյակների և խաղասենյակների դռների լայնությունը նախատեսել ոչ պակաս 1,2 (Դ-1, Դ-2)

Սակավաշարժ խմբերի համար նախատեսել սանհանգույցներ

Մանկապարտեզում նախատեսել ստորգետնյա ապաստարան (թաքստոց)

Նախատեսել հրշեջ հիդրանտ (շենքից 200 մետր շառավղով բացակայության դեպքում)

Ներկայացնել նախագծող կազմակերպության լիցենզիան և ներդիրը սահմանված կարգով վավերացված ընկերության կնիքով:

Ներկայացնել շինարարական կոնստրուկցիաների հաշվարկները:

Ներկայացնել նախագիծ, նախահաշիվ և ծավալաթերթ միավորի գներով:

Նախագծային փաստաթղթերը ներկայացնել 5 օրինակից

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Մ. Սարգսյան

Կ. Տ.

Կատարողներ՝
Քաղաքաշինության և հողաշինության
բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Հ. Պետինյան
Կատարող՝ Գ. Մ. Դավթյան